



233B

# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 • 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 28955  
Մարտ 20, 1978

Արժանաշնորհ  
Տ. Տիրան Զինյ. Փափագեան  
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ  
Նախագահ Ժխական Խորհուրդի  
Գլխավէնա.

Սիրելի Տէր Տիրան,

Ստացած ենք 1978 Փետրուար 22 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը  
հաղորդէք թէ 2եր նախագահութեամբ Յունուար 28ին զո մարուած համայն-  
քիդ Ժխական Ժողովին մէջ կատարուած է Ժխական Խորհուրդի հինգ անդա-  
մոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը  
խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ 2եր Ժխական Ժողովը տեղի ունեցած է Թեմական  
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք  
Ժխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել Ժխական Խորհուրդի նորընտիր  
Դիւանի անդամոց եւ եկեղեցւոյդ ենթակայ մարմիններու վարչութեանց  
ատենապետներու անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով Ժխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր  
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի  
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր  
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՂԵՍԿՈԳՈՍ  
Առաջնորդ

Կարապետ Արփաճեան  
Պապ Պաղտասարեան  
Հէլէն Զէքէմեան  
Ճէք Հաչերեան  
Ֆլորէնս Գարօղլանեան